

առաջարկեց տէրութեան նոր փորձ մ'ալ
ընելու: Տէրութիւնն սուրբ սպասել,
Գերմանացւոց (Բեդերմանի խրատով)
և Շուետաց նաւարկութեանց ելքը դի-
տելով. հիմայ որ ասոնց կրկին և կրկին
փորձերն անյաջող ելան, Օղպոռն նա-
ւապետն կ'առաջարկէ թողուլ անոնց
փրնտաւած ճամբան, որ է Սբիցպերկի,
նոր Չեմլեայ և կրենլանտիոյ միջոցը, ուր
միշտ ծովը սառուցեալ և արդելք գտան,
և փորձել կրենլանտիոյ ափունքը. որ
ցամաք գետին ըլլալով աւելի դիւրու-
թիւն կ'ընծայէ ճամբու, մանաւանդ որ
ատլանդեան ծովայորձանք մ'ալ կ'իջնէ
անոր արևելեան եզերքներէն, և կը
յուսացընէ որ դէպ 'ի հիւսիս դեռ շատ
վեր երկնցած պիտի ըլլայ այն երկիրը,
որուն ինչուան հիմայ ծանօթ ամենէն
հիւսիսային մասն ալ 600 մղոնի չափ
լայնութիւն ունի. մեծ վաստակ մը կ'ըլ-
լայ այս երկրին անծանօթ եզերքները
քննել, և անոնցմէ չհեռանալով դէպ
'ի հիւսիս ելնել, ու բալխիրներով չորս
կողմը զննել, և գտնել անտառներ, որ
ըստ յուսոյ ոմանց ինչուան բւեռին մօտ
սահմանները պիտի գտուին: — Օղպոռ-
նի առաջարկութեան հաստատութիւն
կամ վճիռ տրուած չէ. բայց կը յուսա-
ցուի որ ուշ կամ շուտ 'ի գործ դրուի:

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ ՃԱՌՈՆԱԾ

Որչափ ցանկալի և կարևոր՝ այնքան և
հազուատես և զարմանալի բան մ'է
ազգի մը յանկարծ և քիչ տարուան
մէջ զարգացումն և յառաջելն 'ի քա-
ղաքականութեան և 'ի դիտութիւնս. և
թերեւս պատմութեան մէջ շատ քիչ
կամ հազիւ պատահած է ինչ որ եր-
կու կամ երեք տարիէ վեր կը լսեմք և
կը տեսնեմք ճաբոնաց վրայ. այն Ասիոյ
հին և ամենահին ազգաց մէկն, որ գրե-
թէ քան զամենքն ալ զատուած և մաս-
նաւոր դիրք մ'ունի, հին աշխարհին
ասիական մասին ամենէն արևելակող-

մը և մեծ ովկիանու անդրնդոց մէջ կըղ-
զիացեալ, ինչպէս եւրոպական մասին
արևմտագոյն կողմն ալ ատլանդեան
անդնդոց մէջ կըղզիացեալ է Անգղիա,
յառաջագէմն յարուեստս և 'ի վաճա-
ռականութեան նոր ազգաց: Այս ասիա-
կան նոր Անգղիայն՝ ճաբոն, որուն գրա-
ւոր պատմութիւնն կը սկսի Քրիստոսէ
եօթն դար առաջ, (ճիշդ այն ատեն որ
մեր հին Հայկազուն հարքն ալ բոլորովին
անկախ ինքնագլուխ տէրութիւն մը
կանգնեցին՝ Չարեհի և չորս յաջորդաց
առաջնորդութեամբ), 2533 տարուան
միջոց անընդհատ յաջորդութեամբ նոյ-
նացեղ ինքնակալներ ունեցեր է, որոց
այժմու պայազատն է 122 բորդ, սկսեալ
յառաջնոյն՝ 'ի 660 ամի նախքան ըզ-
թուական փրկչին: Յետ այսքան երկար
դարերու, որոց մէջ դանդաղ զարգացում
մ'ունէր, նման իմն Չինաց, անհաղորդ
ըլլալով կամ խիստ քիչ և ակամայ հա-
ղորդ՝ օտար ազգաց հետ, յանկարծ-
օրէն իմն և ոչ արիւնահեղ յեղափոխու-
թեամբ՝ փոխեց բազմադարեան և հնա-
պաշտ կանխակալ գնացքը և սովորոյ-
թը. որուն գլխաւոր պատճառ մ'ալ
համարուի՝ յետ քանի մը տարիէ վեր
Եւրոպացւոց հետ ունեցած յարաբե-
րութիւնն, Բարիզու աշխարհահանդի-
սին տեսարանը, յոր սրամիտ և սրա-
տես այցելութիւն խաւրուած էին 'ի ճաբո-
նաց. և քննելով Եւրոպացւոց զար-
գացմունքն և առաւելութիւնները՝ ի-
մացուցին իրենց տէրութեան պաշտօ-
նէից և գլխաւորաց:

Ազգանախանձ անձինք իմացան որ
իրենց յառաջագիմութեան մեծ ար-
գելք է իրենց վարչութեան երկու զա-
նազան կերպարանք ունեցող պետաց
վրայ ըլլալն, որոց մէկն Թայքուն կ'ը-
սուէր, և աւելի կրօնական համարուած
էր, միւսն Միգուտոյ՝ աշխարհական.
բազմութիւն մ'ազնուականաց ալ Տա-
յիմոյ կոչուած պայազատական և սե-
փական օրինօք՝ ազգային կամ իշխա-
նական ոյժը կը ջլատէին. եռանդեամբ
և ճարտարութեամբ այս արդելքները
վերուցին. ազգային վարչութիւնը կեն-

դանացուցին 'ի ձեռն երիտասարդ և խոհական Միգատոյի, Տայիմոյից սեփական բաժանիչ ազատութիւնները կարճեցին. և եղաւ զօրաւոր և համաշարժ միապետութիւն մը՝ խորհրդական պաշտօնէից վարչութեամբ: Փարատեցաւ օտարազգեաց դէմ եղած սնոտի ատելութիւնն և խորշումը. մանաւանդ թէ ընդհակառակն՝ մեծ ընտանութիւն մ'երևցաւ, ոչ միայն ընդունելով զօտարս, այլ և իրենցմէ յարմար անձինք խաւրելով յօտար արքունիս և վարժարանս, իբրև նուիրակ և ուսանող: Զինուորական կրթութիւնն յանձնեցաւ փռանկ սպայի մը, նաւականն և երկաթուղեաց գործադրութիւնն՝ Անգղիացւոց: 250 ուսանող խաւրեցին յԱնգղիա, 200 յԱմերիկա, 100 մ'ալ 'ի փռանկաստան և 'ի Գերմանիա: Շատ վարժարաններ ալ իրենց երկրին մէջ բացին յուսումն օտար լեզուաց և արուեստից. միայն գերմաներէն լեզու սովորելու համար առջի տարին 8 կամ 10 աշկերտով սկսեալ տարւոյն վերջը 500 եղաւ վարժողաց թիւն: Յառաջադիմութեան կամ յեղափոխութեան օրինակ չատ բանի մէջ ինքն Միգատոյ կու տայ, և դեռ քիչ ամիս յառաջ փռանկաց զօրավարի համազգեստով ճամբայ ընելով իր գաւառաց մէջ՝ հասարակաց ծափահար գովութիւնն ընդունեցաւ: Արքունեաց մէջ ալ եւրոպական հրահանգներ մտուց, ծնրադրութիւններն և երկրպագութիւնները խափանեց. օտար ազգաց դեսպանները սկսան ընդունիլ առանձնաբար, և ոտք ելնել անոնց ներս մտնելուն. ընդունիլ նաև խնդիրք ընողները, խորհրդակցիլ պաշտօնէից հետ, զինուորական հանդիսից ներկայ գտուիլ և առաջնորդել իսկ. վաճառականաց համար նոր նաւահանգիստներ բանալ. մեծամեծ նաւարաններ և նաւակայներ շինել տալ, ամենայն կարևոր գործեր և գործարանօք: Ի փռանկաց 20 փարոս (լապտերաւոր աշտարակ) բերել տալով կը կանգնեն ծովեզերքը. 250 մղոն երկաթուղւոյ գծուած է, և մաս մը արդէն աւարտած. հեռա-

գրութեան թելերն ալ կը ձգուին և կը պատրաստուին 1000 մղոնի երկայնութեան չափ: Արքունի Դրամանոցն ալ Անգղիացի ճարտարաց յանձնուած է, կատարեալ մեքենայիւք: Ետոյ մայրաքաղաքին ճամբաներն ալ նոր և ուղիւղիրք մը կ'առնուն. քաղքէն քիչ հեռու եղած ոսկէհանքին համար ալ հարկաւոր գործիքներ բերուած են յԱնգղիոյ. ուրիշ հարկաւոր արուեստից համար ալ դիւրացուցիչ գործիքներ կը բերուին: Մասնաւոր խնամով բժշկութիւն ալ կը սովորեցնեն՝ բուն գիտնական և փորձառական կերպով և ոչ հնոտի և սնոտի սովորութեամբք: Ինչուան օրինաց համար ալ փռանկաց անուանի Պատժական օրինագիրքը թարգմանել սկսան:

Ըստ ներքին քաղաքական վարչութեան ճարտն 75 գաւառ բաժնուած է, իւրաքանչիւրին վերակացու նախարար մը կայ՝ ընդարձակ իշխանութեամբ, բայց ոչ բացարձակ որպէս երբեմն. մահուան և արտասահմանութեան վճիռն չեն կրնար տալ առանց տէրութեան պաշտօնէին հրամանին. իրենց ձեռքին տակ դատաւորք իւրաքանչիւր գեղից և վիճակաց վրայ կը հսկեն: Յայտ է որ այսպիսի օրէնք և բարեկարգութիւնք դեռ հաստատուելու և տարածուելու վրայ են: Տէրութեան տնտեսութեան համար ալ եւրոպական օրինօք ելումը. տից կարգ և ցուցակ հաստատուեցաւ, և հրատարակեցաւ անցեալ (1872) տարւոյն համար եկամուտ 305,000,000 Ֆրանգ, իսկ ծախուց համար 285 միլիոն, որով 25 միլիոն յաւելուած շահ կայ. այս յաւելուածներն պիտի գոցեն տէրութեան պարտքը՝ որ է իբրև 700,000,000: Զինուորութիւնն նոր սկսաւ կարգաւորիլ եւրոպական ոճով. իբրև 80000 են ցամաքային զինուորք, և իբրև 20 նաւ պատերազմի:

Կրթութեան համար բաց 'ի դպրոցներէ՝ սկսան հրատարակուիլ օրագիրք և լրագիրք. և զարմանալի երագութեամբ թարգմանուիլ օտար լեզուաց գրքեր, մանաւանդ պատմական, բա-

րոյական, արուեստից և տնտեսութեան վերաբերեալ գրուածներ, զոր մեծ աւսործով և եռանդեամբ կ'ընթեռնուն, քան ուրիշ տեսակ գրուածներ: — Երկրագործութիւնն միշտ խնամով 'ի գործ դրուած էր 'ի ճարոն, ուստի շատ մեծ յառաջադիմութիւն չէր կրնար ընել, բայց եթէ նոր դիւրացուցիչ գործեր, և օտար տուններ ընդունելով 'ի մշակութիւն: ճարոնի կլիմայն ալ ընդհանրապէս մեղմ և բարեխառն է, երկրին ուռուցումն ճարտարութեամբ յաջողած. գլխաւոր մշակուած բերքն է բրինձ, ոչ պակաս և թէյ, չերամ՝ որոյ որդանց ձուերը կը խաւրեն յեւրոպա և յայլ կողմանս, և ընդեղէններ: Նշանաւոր են թուղթ շինելու թթենիք, մոմաբեր ծառն, քափուրագափնին, խիժաբեր ծառն, և այլն. և պէսպէս ծաղկունք, որով բուրաստանաց կամ պարտիզաց դարմանն և արուեստն ալ նշանաւոր եղած է 'ի ճարոն:

Երկրին հարըստութեան և արուեստից մեծ աղբիւր մ'ալ են տեսակ տեսակ մետաղներն, հանքածուխն, վանակն, 'ի ծովեզերս ալ բուստ և մարգարիտ: Շատ ճարտար են ճարոնացիք ոսկիէ և պղնձէ գործուածներու, և դանակեղէն շինելու. զարմանալի յաջողութիւն մ'ալ ունին սովրելու և նմանելու օտարաց արուեստին, որով քիչ ատենէն թերևս կարօտ չըլլան յեւրոպացւոց առնուկահ կարասի: Իրենց ձեռագործաց մէջ անուանի են կնքախէժն (laque), յախճապակն, մետաքսեայ բարակաման շաքը, որոց նման դեռ ուրիշ տեղ չերևցաւ, և թուի թէ գաղտնիք մ'ունին յայսմ ճարոնք: Բայց ուրիշ օգտակար և պիտանի ձեռագործաց ալ դեռ կարօտութիւն ունին օտարներէ առնուլ:

Բայց ճարոնաց ամենէն յառաջադիմութիւնն այս է՝ որ ժողովուրդն ալ սկսաւ հասկընալ իր գլխաւորաց կամ վարչութեան ջանից և գործոց օգուտը, և սկսաւ թողուլ օտար ազգաց հետ ունեցած կանխակալ ատելութիւնը. որով սղբա հիմայ կըրնան անվախ բնակիլ թէ 'ի մայրաքաղաքն Ետոյ և թէ

ուրիշ վաճառաչահ քաղաքներ. աւսիկն կը բռնէ զլեզուն՝ նախատական խօսք կամ անուն տալու, և ոչ միայն կ'ընտելանայ օտար կերպարանաց և տարազուց, այլ և իրեն ազնուականաց շատն ալ կը տեսնէ եւրոպական զգեստով և ձևով: Անշուշտ այնչափ աւելի պիտի զարգանայ տէրութիւնն՝ որչափ որ յաջողի ընտելացընել զժողովուրդը օտարազգեաց պիտանի սովորութեանց և հնարից, և ջնջել այն անպատճառ և բարիարգել խորշումն և ատելութիւնը, որով ճարոնաց դրացի և անհամեմատ մեծ ազգն և տէրութիւնն ջինաց՝ անհամեմատ կերպով ալ յետամնացը են:

Պ. ՇԼԻՄԱՆԻ ԳԻԻՏԸ

Աւելուսդայի լրագիրը հրատարակեց վերջերս Պ. Հենրիկոս Շլիմանի մէկ նամակը, այն անձին որ իլիոն քաղրին ստոյգ տեղը գտնելու համար ըրած անխոնջ հետազօտութեամբն ծանօթ է ամեն գիտնականաց:

Այս նամակն զոր գրեց Պ. Շլիման 'ի Տրոյիոյ տարւոյս յուլիսի 17^ն, կը պարունակէ շատ մը անակնկալ ու հետաքրքրական տեղեկութիւններ, զորոց զգլխաւորս համառօտիւ նշանակենք:

« Ամսոյս սկիզբը, կը գրէ Պ. Շլիման, տրոյական մեծ պարսպին տակ և մօտ այն շէնքին զոր արդէն տուն Պրիամու համարէաք, ութեկէս մեղր խորութեամբ մեծ ու նշանաւոր ձևով պղնձաձոյլ աման մը գտայ, և տեսնելով անոր մօտ եղած ոսկիներն՝ հետաքրքրութիւնս շարժեցաւ իմանալու այն ամանին ինչ ըլլալը: Ամանին վրայ մէկ ու կէս մեղր թանձրութեամբ կարմրագոյն մոխրէ կեղև մը պատած էր, իբր զքար պնդացեալ. և ունէր չորս կողմը ամրութեան համար 1. 80 մեղր լայնութեամբ և 6 մեղր բարձրութեամբ զօրաւոր պատ մը. և ինձ հաւանական թուեցաւ որ դրուած ըլլայ